Համագործակցության մասին Փոխըմբռնման Հուշագիր՝ ստորագրված ՀՀ փաստաբանների պալատի և ՀՀ ոստիկանության միջև

09.02.2012 12:39

ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ
Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի և Հայաստանի Հանրապետության ոստիկանության միջև համագործակցության մասին

ք. Երևան

08.02.2012թ.

Մի կողմից Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը (այսուհետ՝ Պալատ), ի դեմս Պալատի նախագահ Ռուբեն Սահակյանի, և մյուս կողմից Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը (այսուհետ՝ Ոստիկանություն), ի դեմս Ոստիկանության պետ, գեներալ-լեյտենանտ Վլադիմիր Գասպարյանի, (այսուհետ՝ կողմերը միասին՝ Կողմեր),

Հիմք ունենալով ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով և ՀՀ օրենքներով ամրագրված օրինականության, անձի իրավունքների և ազատությունների, պատիվն ու արժանապատվությունը հարգելու, մարդասիրության ու հրապարակայնության սկզբունքները,

Անվերապահ ընդունելով, որ Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են, Հաշվի առնելով, որ իրենց մասնագիտական գործունեությունն իրականացնելու ընթացքում ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքները խախտած ոստիկանության ծառայողների կամ փաստաբաններին պատասխանատվության ենթարկելը Ոստիկանության և/կամ Պալատի պարտականությունն է,

Կարևորելով իրավունքի ոլորտի զարգացմանն ուղղված համագործակցության նկատմամբ փոխադարձ հետաքրքրությունը, Համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1 Համագործակցության առարկան

1.1 Կողմերը համաձայնվում են համագործակցել հետևյալ ուղղություններով.

1.1.1 Օրենսդրական նախաձեռնություն – նորմատիվ իրավական ակտերի նախագծերի համատեղ մշակում և ներկայացում իրավասու մարմիններին:
1.1.2 Արագ արձագանքման միջոցառումներ - Ոստիկանության աշխատակիցների և փաստաբանների միջև՝ կապված նրանց մասնագիտական պարտականությունների կատարման հետ, որևէ խնդիր ծագելու դեպքում, այդ խնդրի անհապաղ քննարկումը և օրենքի տառին համապատասխան լուծումը:
1.1.3 Վարքագծի կանոնների պահպանման ապահովում - ոստիկանների կամ փաստաբանների կողմից վարքագծի կանոնների խախտումների հայտնաբերումը, փոխադարձ իրազեկումը և պատասխանատվության ենթարկելու հարցի լուծումը.
1.1.4 Սեմինարներ և միջոցառումներ – անցկացվելիք միջոցառումների և/կամ սեմինարների մասին տեղեկատվության փոխանակում: Փոխադարձ դասընթացների վարմանը մասնակցություն:
1.1.5 Քննարկումներ – համատեղ քննարկումների (կլոր սեղաններ) կազմակերպում՝ իրավունքի կամ գործնական ոլորտում առաջացած խնդրահարույց և այլ հարցերի կապակցությամբ:
1.1.6 Գրականության փոխանակում – Կողմերի տիրապետման ներքո գտնվող գրականությունից ազատ օգտվելու հնարավորություն:
1.1.7 Դիտորդական առաքելություն – միջոցառումների կազմակերպման և անցկացման ժամանակ, ըստ կողմի հայեցողության, դիտորդների ապահովում:
1.1.8 Հարգանքի ձևավորում - սպորտային կամ ինտելեկտուալ խաղերին կամ այլ միջոցառումներին ոստիկանների և փաստաբանների ներգրավումը:

Հոդված 2 Հանձնախումբը

2.1 Սույն Հուշագրով նախատեսված համագործակցությունն իրականացնելու նպատակով Կողմերը ստեղծում են հասարակական հիմունքներով գործող վեց անդամներից կազմված հանձնախումբ (այսուհետ՝ Հանձնախումբ), որը ձևավորվում է հետևյալ կերպ՝
2.1.1. Ոստիկանության պետի հրամանով նշանակվում են Հանձնախմբի երեք անդամները՝ Ոստիկանության համակարգից, որոնցից մեկը Ոստիկանության համակարգող,

2.1.2. Պալատի նախագահի որոշմամբ նշանակվում են Հանձնախմբի երեք անդամները՝ փաստաբանների կազմից, որոնցից մեկը Պալատի համակարգող:
2.2. Հանձնախումբը գործում է երեք տարի ժամկետով: Հանձնախմբի հաջորդ կազմի ընտրությունը կատարվում է Հուշագրի 2.1 կետում նշված կարգով:
2.3. Հանձնախումբը՝
2.3.1. գործում է համերաշխության սկզբունքով.
2.3.2. կարող է առաջարկություն ներկայացնել Ոստիկանության պետին, Պալատի նախագահին կամ այլ պաշտոնատար անձանց՝ իրավունքների խախտումները վերացնելու մասին.
2.3.3. դիմում է Ոստիկանության պետին կամ Պալատի նախագահին համապատասխան ոստիկանին կամ փաստաբանին պատասխանատվության ենթարկելու առաջարկությամբ.
2.3.4. անհրաժեշտության դեպքում, Ոստիկանության պետի և Պալատի նախագահի գիտությամբ, հանրության առջև հանդես է գալիս համատեղ հայտարարությամբ.
2.3.5. կազմակերպում է սպորտային կամ ինտելեկտուալ խաղեր կամ այլ միջոցառումներ.
2.3.6. նորմատիվ իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքային խումբ ստեղծելու անհրաժեշտության դեպքում, Ոստիկանության պետի և Պալատի նախագահի հանձնարարությամբ, կազմավորում է աշխատանքային խումբ, սահմանելով վերջինիս աշխատակարգը և ժամանակացույցը.
2.3.7. ապահովում է Հուշագրի 1.1 կետում նշված համագործակցությունը.
2.3.8. տալիս է հայտարարություններ, եզրակացություններ և առաջարկություններ:
2.4. Հանձնախմբի երկու համակարգողները՝
2.4.1. ապահովում են Հանձնախմբի անդամների հանդիպումը.
2.4.2. ապահովում են Հանձնախմբի անդամների փոխադարձ շփումները.
2.4.3. Հանձնախմբի անդամների միջև կատարում են աշխատանքի բաժանում.
2.4.4. իրենց մասով ապահովում են Հանձնախմբի գործավարությունը և փաստաթղթերի պահպանությունը (պահպանվում են Պալատում և Ոստիկանությունում):
2.5. Հանձնախմբի անդամը (այդ թվում՝ համակարգողը)՝
2.5.1. կարող է Հանձնախմբում քննարկման ներկայացնել ցանկացած բնույթի հարց.
2.5.2. տեղեկացնում է Հանձնախմբի մյուս անդամին՝ տեղի ունեցած խախտման մասին.
2.5.3. Հուշագրի շրջանակներում արագ

արձագանքում է Հանձնախմբի մյուս անդամի կանչին և համապատասխան միջոցներ է ձեռնարկում.
2.5.4. իրականացնում է այլ գործողություններ, որոնք բխում են Հուշագրի 1.1 կետում նշված համագործակցության առարկայից:
2.6. Հանձնախմբի անունից արված հայտարարությունը, տրված եզրակացությունը կամ առաջարկությունը վավեր է, եթե այն հավանության է արժանացել Հանձնախմբի բոլոր անդամների կողմից: Համաձայնության չգալու դեպքերում, վիճելի հարցի լուծման նպատակով, կողմերի համակարգողները կարող են դիմել Ոստիկանության պետին և Պալատի նախագահին:
2.7. Հարցի անհետաձգելի լուծում պահանջող դեպքերում (օրենքի պահանջների կոպիտ խախտում, իրավունքների սահմանափակում, օրենքով նախատեսված պարտականություններն իրականացնելուն խոչընդոտում) իրավասու կողմի համակարգողը պետք է անհապաղ միջոցներ ձեռնարկի օրենքի շրջանակներում հարցի անհապաղ լուծման համար, արդյունքների մասին անհապաղ տեղյակ պահելով մյուս կողմին:
2.8. Հանձնախմբի անդամների հանդիպումները կարող են արձանագրվել: Արձանագրությունը կազմվում է երկու օրինակից, որոնք ստորագրվում են ներկա անդամների կողմից:
2.9. Հանձնախումբը կիսամյակի ավարտից հետո 15 (տասնհինգ) օրվա ընթացքում հաշվետվություն է ներկայացնում Պալատի նախագահին և Ոստիկանության պետին կատարված աշխատանքների մասին:

Հոդված 3 Եզրափակիչ դրույթներ

3.1 Կողմերը հաստատում են, որ սույն հուշագիրը չի արտացոլում իրենց համագործակցությանը վերաբերող բոլոր կետերը և որ դրանք ենթակա են հետագա քննարկման և անհրաժեշտության դեպքում գրավոր ձևակերպման:
3.2 Սույն հուշագիրն ուժի մեջ է ստորագրման պահից:
3.3 Յուրաքանչյուր Կողմ կարող է միակողմանիորեն, առանց որևէ պատճառի ետ կանչել (լուծել) սույն Հուշագիրը: Հուշագիրը կարող է նաև ետ կանչվել (լուծվել) կամ փոփոխվել Կողմերի գրավոր համաձայնությամբ:
3.4 Սույն հուշագիրը կազմված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:
3.5 Սույն Հուշագրում Կողմերի փոխադարձ համաձայնությամբ կարող են փոփոխություններ

կատարվել, որոնք կձևակերպվեն առանձին արձանագրություններով: Այդ արձանագրություններն ուժի մեջ կմտնեն Կողմերի կամ նրանց լիազոր ներկայացուցիչների ստորագրման պահից և կկազմեն սույն Հուշագրի անբաժանելի մասը:

Ի հավաստումն վերոգրյալի՝ պատշաճ ձևով լիազորված ներքոստորագրյալ ներկայացուցիչներն ստորագրեցին սույն Հուշագիրը:

ՀՀ փաստաբանների պալատ
ՀՀ ոստիկանություն

Ռուբեն Սահակյան
Վլադիմիր Գասպարյան

Պալատի
Նախագահ
Ոստիկանության պետ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })